# Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1**. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «կամ համայնքային» բառերը:

**Հոդված 2**. Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասում «համայնքի ղեկավարի» բառերից հետո լրացնել «տեղակալի» բառը։

**Հոդված 3**. Օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասում «(աշխատակազմի ղեկավարը)» բառերից հետո լրացնել «կամ համապատասխան համայնքապետարանի (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի քարտուղարը» բառերը։

**Հոդված 4**. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Համայնքապետարաններում (Երևանի քաղաքապետարանում) (այսուհետ՝ համայնքապետարան) հաստիքների առավելագույն քանակը որոշում է համապատասխան համայնքի ավագանին:»

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Պետական մարմիններում և համայնքապետարաններում նախատեսվում է հաստիքացուցակ: Հաստիքացուցակում ներառվում են տվյալ մարմնի բոլոր պաշտոնները, այդ թվում՝ քաղաքացիական աշխատանք և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:»:

3) 6-րդ մասում «Հանրային» բառը փոխարինել «Պետական» բառով:

**Հոդված 5.** Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին «տեղական ինքնակառավարման այլ

մարմիններում» բառերից հետո լրացնել «համայնքապետարաններում» բառը:

**Հոդված 6.** Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի ղեկավարը կամ աշխատակազմի ղեկավարի» բառերը փոխարինել «Պետական մարմնի աշխատակազմի ղեկավարը (գլխավոր քարտուղարը) կամ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ դրանց)» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

----------------------------------------------------------------------------------------------------------

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ օրենքներում փոփոխությունների կամ լրացումների կատարման անհրաժեշտությունը բացակայում է:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

-----------------------------------------------------------------------------------------------

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: